

ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ

ԲԱՆԿԻ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

Պատճեն՝ Ասիական Զարգացման բանկի առաքելությանը Հայաստանում

Ձեզ են դիմում <<Զվարթնոց>> օդանավակայանի Ա և Բ շենքերի կոմունալ բնակարանների բնակիչները:

Սրդեն շուրջ 26 տարի մենք բնակվում ենք համատեղ պայմաններում, որից 10 տարին սպասում ենք նոր բնակարանների, որոնք խոստանում էին որ կլինեն ավելի ընդարձակ : Սակայն տրամադրվող 43ք.մ ներքին մակերեսով բնակարանը /61քմ արտաքին մակերեսով/ շատ փոքր է ընտանիքի հարմարավետ կացությունը ապահովելու համար: Այն չունի առանձնացված միջանցք, որը ուղղակի անհրաժեշտ է հաշվի առնելով երևանյան ձմեռային ցուրտ կլիման, շքամուտքից միանգամից մտնում ես խոհանոց և ճաշասենյակ, որոնք համատեղ են և կազմում են միասին 22.0քմ, մյուս սենյակը 11.7քմ: Իսկ մեր ունեցած բնակարանները ունեն առանձին խոհանոց 8.3քմ.՝ կից 2.8քմ փակ պատշգամբ, մենք օգտագործում ենք դրանք համատեղ, այլ ոչ կիսովի, իսկ սենյակները կազմում են մի ընտանիքը - 19.86քմ.՝ կից 4.5քմ փակ պատշգամբ, երկրորդ ընտանիքը - 10.0քմ՝ կից 2.7քմ փակ պատշգամբ և 13.65 քմ: Մեր ունեցած պատշգամբերը փակ են, որը մեզ հնարավորություն է տվել ունենալու ավել բնակելի տարածք, ինչը մենք չենք կարող ունենել նոր բնակարաններում: Կոմունալ հարմարություններն ինքնըստինքյան արդեն անտանելի են կյանքի համար, և այսքան տարիների օդանավերի աղմուկի, շինարարական փոշու, խոստումների համբերատար սպասումներից հետո հայտնվել փոքրիկ բնակարանում՝ ուղղակի անարդար է: Մեր շենքերի մյուս 2 և 3 սենյականոցների համար նախագծված և կառուցված են մեծ ընդհարձակ բնակարաններ, որտեղ հաշվի է առնվել և՛ հայկական կլիմայի և՛ հայկական կենցաղի առանձնահատկությունները, ինչի համար մենք ուրախ և շնորհակալ ենք: Սակայն մենք այս 6 ընտանիքներս, ինչպես մինչ այս, այդպես էլ ինչպես հետևում է հատկացված բնակարանների մակերեսներից, էլի հայտնվում ենք ոչ այնքան բարելավ պայմաններում:

Կոմունալ բնակարանները ընդամենը 3-ն են, որոնցում բնակվում են 6 ընտանիքներ՝ ընտանիքի 21 չավահաս անդամներով: Ըստ Նոր շենքերի նախագծերի, կան ավելի մեծ 52 քմ ներքին /76քմ արտաքին/ մակերեսով բնակարաններ: 2012թ դեկտեմբերին կայացած համատեղ ժողովում մեզ խոստացվեց վերանայել նախկին որոշումը և հատկացնել վերը նշված 52քմ մակերեսով բնակարանները, իսկ եթե մենք ցանկություն ունենանք ավել տարածք գնելու մեզ կտրամադրեն այն 500 դոլլար 1 քմ դիմաց գումարով: Մույն թվականի ապրիլին կայացած ժողովում օդանավակայանի ղեկավարությունը հրաժարվեց իր տված խոստումից:

Խնդրում ենք Ձեզ հասկանալ մեր խնդրանքը, և գուտ մարդկային տեսնկյունից դիտարկելով այս հարցը, միջամտելով բնակարաններ հատկացնելու գործընթացին, այս 6 ընտանիքներին 43քմ բնակարանի փոխարեն հատկացնել 52քմ ներքին

մակերեսով ընդարձակ բնակարանները և ուժի մեջ թողնել այն պայմանը, որ բացի այդ ավել տարածքի դիմաց վճարը թողնել 500դրվ. :

Կանխավ հայտնում ենք Ձեզ մեր շնորհակալությունը :

Համաձայն դիմորդների խնդրանքի, այս նամամ Հատուկ ծրագրի միջնորդի գրասենյակը /ՐԾՍԳ/ հանել/ջնջել է բոլորի անունները և նրանց կոնտակտային տեղեկությունները՝ վերջիններիս ինքնությունը գաղտնի պահել նպատակով: